ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

համակարգից օգտվելու ծառայությունների տրամադրման վերաբերյալ

ք. Երևան "10" փետրվարի 2025թ.

«Հայկական Ծրագրերե սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս տնօրեն Աշոտ Խաչատրյանի, ով հանդես է գալիս ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Սյունիքի Մարզպետի Աշխատակազմ՝ ի դեմս գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանի, ով հանդես է գալիս ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մյուս կողմից, վարեցին բանակցություններ և ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ պայմաններով.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պայմանագրով Կատարողը գույքային իրավունքների գործողության ողջ ժամկետում, իսկ օրենքով թույլատրվող դեպքերում՝ նաև անժամկետ, Պատվիրատուի օգտագործմանն է հանձնում ծագրային արտադրանքները, դրանց թարմացված տարբերակները և պայմանագրով և ընտրված սակագնային փաթեթով նախատեսված պայմաններով և ծավալով Պատվիրատուին է տրամադրում Համակարգի և Ամպային տվյալների պահոցների օգտագործման իրավունքը՝ իրականացնելով Համակարգի սպասարկում, տրամադրելով Համակարգի աշխատանքի վերաբերյալ տեղեկատվա-տեխնիկական աջակցություն, ինչպես նաև ըստ անհրաժեշտության պայմանագրով և գնացուցակով նախատեսված լրացուցիչ ծառայություններ, իսկ պատվիրատուն պարտավորվում է ընդունել ծառայությունները և վճարել դրանց համար պայմանագրով և գնացուցակով նախատեսված արժեքները:

1.2. Համակարգի օգտագործման իրավունքի տրամադրմամբ պատվիրատուին է տրամադրվում վճարված բաժանորդագրության ժամկետի ամբողջ ընթացքում Համակարգի և Համակարգի համապատասխան ծրագրային արտադրանքների /ծրագրային ապահովումների/ ֆունկցիոնալ հնարավորությունները օգտագործելու ոչ բացառիկ, սահմանափակ և չփոխանցվող իրավունքը, ինչպես նաև Ամպային տվյալների պահոցներում տեղեկատվության հավաքագրման և պահպանության հետ կապված ծառայությունները՝ Գնացուցակով նախատեսված պայմաններին և ծավալներին համապատասխան:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՐԺԵՔԸ

1.3. Պայմանագրի արժեքը, լրացուցիչ ծառայությունների արժեքները սահմանվում են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող գնացուցակով, որը կցվում է պայմանագրին, ինչպես նաև հրապարակված է www.armsoft.am կայքում:

1.4. Սպասարկման գները միակողմանիորեն կարող են վերանայվել Կատարողի ներքին իրավական ակտով՝ տարեկան մեկ անգամ՝ հուլիսի 1-ին: Ընդ որում, գների աճի դեպքում աճը չի կարող գերազանցել հետևյալ տոկոսների գումարը՝ նախորդ տարվա համար պաշտոնապես հայտարարված սղաճ գումարած նախորդ գնի նկատմամբ մինչև 7 տոկոս (որն իր մեջ ներառում է նաև Կատարողի կողմից մշակվող Համակարգի և ծրագրավորման ոլորտի տեխնոլոգիական բարդացումը): Սպասարկման գները վերանայելու ներքին իրավական ակտի հիման վրա ձևավորված նոր գինը Կատարողը պարտավոր է տեղադրել և հրապարակել www.armsoft.am կայքում դրանց ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 2 (երկու) ամիս առաջ:

1.5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի և Կատարողի կողմից կնքելու պահից և գործում է մեկ տարի:

3. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.6. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է և դրանով պայմանավորված կողմերի միջև հարաբերությունները կարգավորվում են www.armsoft.am կայքում հրապարակված համակարգից օգտվելու ծառայությունների տրամադրման վերաբերյալ օֆերտայով (պայմանագրով), որը գտնվում է https://www.armsoft.am/data/oferta.pdf հղման տակ:

1.7. Սույն պայմանագրի և www.armsoft.am կայքում հրապարակված համակարգից օգտվելու ծառայությունների տրամադրման վերաբերյալ օֆերտայի (պայմանագրի) միջև հակասություն առաջանալու դեպքում կիրառման նախապատվությունը տրվում է www.armsoft.am կայքում հրապարակված համակարգից օգտվելու ծառայությունների տրամադրման վերաբերյալ օֆերտային (պայմանագրին):

Կատարող

Հայկական Ծրագրեր ՍՊԸ
հ/հ 2500010002240100
Արմսվիսբանկ ՓԲԸ
Էլ.Փոստ՝ support@armsoft.am
ՀՎՀՀ՝ 00807555
Հասցե՝ ք. Երևան, Չարենցի փ. 1

Տնօրեն՝ Ա.Խաչատրյան

Պատվիրատու

ՀՀ Սյունիքի Մարզպետի Աշխատակազմ
հ/հ 900311080049
Կապանի գանձապետական բաժանմունք
Հեռ.՝ Էլ. Փոստ՝ smarz-hhb@mail.ru
ՀՎՀՀ՝ 09430281
Հասցե՝ Սյունիք, Կապան, Գ. Նժդեհի 1

Սույն պայմանագրի ստորագրմամբ պատվիրատուն հաստատում է, որ ծանոթացել և համաձայն է www.armsoft.am կայքում հրապարակված համակարգից օգտվելու ծառայությունների տրամադրման վերաբերյալ օֆերտայի (պայմանագրի) պայմաններին:

Գլխավոր Քարտուղար Է. Մարտիրոսյան

ԱԿՏ

համակարգից օգտվելու ծառայությունների տրամադրման վերաբերյալ

ք. Երևան "10" փետրվարի 2025թ.

«Հայկական Ծրագրեր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն (այսուհետ՝ Կատարող)՝ ի դեմս տնօրեն Աշոտ Խաչատրյանի, ով հանդես է գալիս ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ Սյունիքի Մարզպետի Աշխատակազմ՝ ի դեմս գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանի, ով հանդես է գալիս ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մյուս կողմից, կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.

1. Կատարողը գույքային իրավունքների զործողության ողջ ժամկետում, իսկ օրենքով թույլատրվող դեպքերում՝ նաև անժամկետ, Պատվիրատուի օգտագործմանն է հանձնում «ՀԾ-Հաշվապահ 7» 2 (երկու) աշխատատեղի համար համակարգի սպասարկում համակարգչային ծրագիրը, որի արժեքը կազմում է 135,000.00 դրամ, ԱԱՀ 20%՝ 27,000.00 դրամ, ընդամենը՝ 162,000.00 դրամ:

Կատարող
Հայկական Ծրագրեր ՍՊԸ

Տնօրեն՝ Ա. Խաչատրյան

Պատվիրատու
ՀՀ Սյունիքի Մարզպետի Աշխատակազմ

Գլխավոր Քարտուղար Է. Մարտիրոսյան